

ԳՐԻԳՈՐ ԶՈՂՐԱՊԻ ԵՐԿԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Ս. ՇԱՐՈՒՐՅԱՆ

Դասական գրողների երկերն ուսումնասիրելիս առհարկի անհրաժեշտություն է առաջանում նաև պարզել դրանց հրատարակության հանգամանքները: Այս վերջինները հաճախ ոչ միայն նպաստում են հեղինակի կյանքի ու գործի առավել ամբողջական իմացությանը, այլև լույս են սփռում ժամանակի գրական-հասարակական ինչ-ինչ անցքերի վրա, ի հայտ են բերում առանձին գործիչների փոխհարաբերությունների նոր կողմեր: Հետաքրքրող խնդրի առումով ուշագրավ դիտարկումների հնարավորություն են ընձեռում նաև Գրիգոր Զոհրայի (1861—1915) գեղարվեստական մի քանի երկերը:

Հայտնի է, որ Զոհրայի «Անհետացած սերունդ մը» վեպը սկսել է հրատարակվել Կ. Պոլսի «Երկրագունտ» հանդեսի 1885-ի մայիսյան համարում: Սակայն վեպի տպագրությունը այդ պարբերականում չի շարունակվել և միայն մեկ տարի անց (հուլիսի 21—նոյեմբերի 1) ամբողջությամբ. ներառյալ «Երկրագունտի» հատվածը, լույս է տեսել «Մասիս» շաբաթաթերթում: Այս պարագան չի վրիպել հետազոտողների ուշադրությունից: Այսպես, Զոհրայի կենսագիրը, հղելով Ա. Արփիարյանի մի վկայությունը, որին ստորև կանդակագրականը, հայտնի է. «Վեպը կիսատ կը մնա, վասնզի Երկրագունտ քիչ մը բաց գտած էր զայն»¹: Իսկ թե ի՞նչ հիմամբ է Արփիարյանը նման պնդում արել և ի՞նչ «բաց» հատվածների մասին է խոսքը, ո՞չ Արպոյաճյանը, ո՞չ էլ հետագա ուսումնասիրողները չեն պարզել: Փորձենք պատասխանել այդ հարցերին:

Տակավին ուսանողական տարիներից Զոհրայը անդամակցել է Կ. Պոլսի հասցյուղ թաղամասում գործող Ասիական ընկերությանը և 1882-ի գարնանը ընտրվել նրա գործադիր ժողովի ատենապետ: Այս հաստատությունը թեև հետապնդում էր կրթական խնդիրներ (սկսած ուսանողաց աժան կամ ձրի գիրքեր և դպրոցական պետքեր հայթայթել), բայց մայրաքաղաքի մշակութային նույնատիպ ընկերություններից տարբերվում էր նրանով, որ 1883—1888-ին ուներ իր տպագիր օրգանը՝ «Երկրագունտ» դրական ու դիտական հանդեսը: Փաստերը ցույց են տալիս, որ Զոհրայը ամենադժոժում մասնակցություն է բերել պարբերականի խմբագրման աշխատանքներին: Օրինակ, դատելով ճանաչված հրապարակախոս ու հասարակական գործիչ Մարկոս Աղաբեկյանի մի նամակից, Զոհրայը խնդրել է զգրական աշխատասիրությունը՝ օգտակար լինել «Երկրագունտին»²: Իսկ Գրասեր Աստուր (Եղիա Տեմիրճիպաշյան) նշել է, թե «հրատարակիչ ընկերության տնօրեն Գրիգոր Զոհրայի հրավիրանաց վրա» է ինքը ստանձնել «Երկրագունտի» տնօրեն-խմբագրի պաշտոնը³: Ավելին, հանդեսի հրատարակության գործում Զոհրայի ծառայություններն այնքան մեծ են եղել, որ խմբագրությունը գրողի ամուսնության առիթով շնորհավորելով նրան, հարկ է համարել հրապարակորեն հայտնել. «Խմբագրությունս պարտք կը համարի բարերաստիկ միություն մաղթել առ Մեծապատիվ Գրիգոր էֆենտի Զոհրայ, որ քանի տարիներ պետք է և՛ Ասիական ընկերության տնօրեն ժողովույն և գլխավոր հիմնադիրն եղած է Երկրագունտ հանդիսին»⁴:

¹ Արշակ Ա. Արպոյաճյան. Գրիգոր Զոհրայ (Իր կյանքը և իր գործը). Կ. Պոլս, 1919, էջ 54:

² Տե՛ս «Երկրագունտ», 1883, № 8, էջ 233—239:

³ «Բյուզանդիոն», օրաթերթ, Կ. Պոլս, 1899, № 630:

⁴ «Երկրագունտ», 1888, փետրվար, էջ 52:

Նրա հաշվի ենք առնում Ասիական ընկերությունում Զոհրապի գրաված դիրքը և «Ներկրագունտի» հրատարակման գործում նրա խաղացած դերը, հասկանալի է դառնում, թե ինչու երիտասարդ գրողը իր ստեղծագործություններն ու հոգվածները այդ տարիներին նախընտրում էր տպագրել տալ հենց այդ հանդեսում: Այսպես, 1883-ին, երբ «Ներկրագունտի» խմբագրապետն էր Հակոբ Պարոնյանը, Զոհրապը լույս ընծայեց երկու քերթված և Սրբուհի Տյուսարի առաջին վեպի առիթով գրած «Մայտա» և «Նարուկի մը պետք կա» նշանավոր հոգվածները: Ե. Տեմիրճիպաշյանը, 1884-ի հունվարից դառնալով հանդեսի խմբագիրը, նույնպես սիրով է հյուրընկալել Զոհրապին: Նա քանիցս դրականորեն է արտահայտվել Զոհրապի գրական ու իմացական ունակությունների, հասարակական գործունեության մասին: Սակայն թե՛ որպես գեղագետ և թե՛ որպես խմբագիր չի ներել այն ստեղծագործողներին, որոնց ճաշակն ու համոզումները չեն ներդաշնակել սեփական պատկերացումներին: Պետք է ենթադրել, որ Զոհրապի «Հրաժեշտ» բանաստեղծությունը և «Զինական նամականի» երգիծական արձակը անհանդուրժելի ուշին չեն պարունակել, ուստի խմբագիրը դրանք նույնությամբ հրատարակել է 1884-ին: Բայց երբ գրողը ներկայացրեց «Անհետացած սերունդ մը» վեպի առաջին հատվածները, Ե. Տեմիրճիպաշյանը դրանց մեջ անմիջապես նկատեց «անպատշաճություններ» և շտապեց սրբագրել: Վեպի սկիզբը լույս տեսավ խմբագրական միջամտություններով, որոնցից հեղինակը վիրավորվել է: Նա դադարեցրել է իր անդրանիկ վեպի տպագրությունը և խնդրել Տեմիրճիպաշյանին՝ այդ առթիվ ընթերցողներին բացատրություններ տալ: Սա կուհում չէ, այլ իրողություն, որ հենվում է հենց իր՝ խմբագրի վկայության վրա: Նկատի ունենալով, որ այդ փաստը անձանթ է մնացել հետազոտողներին, ուզում ենք փոքր-ինչ ընդարձակորեն մեջբերել Տեմիրճիպաշյանի խոստովանությունը, որ արել է Ս. Տյուսարի «Միրանուլը» վեպին նվիրած գրախոսությունում. «Զեմ կրնար գուշակել,—գրել է նա,—թե յուր ամբողջության մեջ Անհետացած սերունդը ի՞նչ սիտ՝ ըլլա... Պարոն Զոհրապ կոչված է Բերես հայոց Զոլան ըլլալ, լուսանկարել կյանքն, իրերն իրենց անվամբն կոչել, առ ոչինչ գրել պատշաճությունն համեմայնի, ռամիկ տարրին հաղթահարել տալ ոստանիկ տարրեր վրա, մերկությունն նկարագրել այնքան խղճամտությամբ, որքան այլք ի փուլթ ունին քողարկելու դայն. այս է պարոն Զոհրապին հատկանիշն: Մեր ազգին համար այդ վաղածաման բնապաշտությունն (naturalisme), ավա՛ղ. երիտասարդ վիպասանին հաճախ տաղտուկներ պիտ' առթե. այսպես, պարոն Զոհրապ հույժ նեղացավ, երբ պաշտոնիս պահանջմամբ և խղճիս հակառակ մեղմացուցի Նրկրագունտի մեջ յուր վեպին ինչ-ինչ բառերն ու պարբերություններն. յուր հատուկ խնդրանաց վրա կը հայտնեմ զայս...»⁵:

Այս տողերից հետևում է, որ Տեմիրճիպաշյանը «Անհետացած սերունդ մը» վեպը ընկալել է որպես նատուրալիստական երկ: Հարկ չկա զբաղվել այս կարծիքի մանրամասն քննությամբ: Նշենք միայն, որ Տեմիրճիպաշյանը, առավել քան 1880-ական թթ. գործիչներից մեկը, ճիշտ չէր կողմնորոշվում նատուրալիզմի ու ռեալիզմի փոխհարաբերության խնդրում: Զուր չէ, որ Տիգրան Կամսարականը իր «Վարժապետին աղջիկը» վեպի առիթով մատնանշում էր, թե «բազմահմուտ հոգվածագիրը (Տեմիրճիպաշյանը—Ա. Շ.) շփոթիլ կը թվի... կարծելով թե իրապաշտ (ռեալիստ) և նյութապաշտ (նատյուրալիստ) դպրոցը նույնն են»⁶:

Նատուրալիզմի մասին իր թյուր ըմբռնումներից ելնելով էլ Տեմիրճիպաշյանը խմբագրել է «Անհետացած սերունդ մը» վեպը: Դրանում կարող ենք համոզվել, եթե համեմատենք ստեղծագործության՝ «Ներկրագունտում» հրատարակված հատվածը «Մասիսում» տպագրվածի հետ: Որպես կանոն, Տե-

⁵ Շարժում գրական և իմաստասիրական. Կ. Պոլիս, 1885, հ. երրորդ, տետր յոթերորդ, էջ 118—119:

⁶ Տ. Կամսարական. Երկեր, Երևան, 1984, էջ 322:

միրճիպաշյանը «մեղմացրել», երբեմն էլ դուրս է նետել այն բառերն ու արտահայտությունները, որոնք վերաբերում են... կանանց: Այսպես, եթե Զոհրապը գրում է, որ իր հերոսը «ամեն օր մեկ երկու ժամ այս աղվան տունը կանցնեն», որ «համալսարանին շուրջը գտնվող տուններուն աղջիկները» նշմարել են «գեղեցիկ դեմք ու գեղեցկագույն աչքեր» ունեցող տղային. որ Տիգրանը «բուռն ու կատաղի եռանդով մը նետվեցավ կանանց մեջ», ապա խմբագիրը սրանք համարել է անպատշաճ ու ընդգծված արտահայտությունները դարձրել՝ «մեկ երկու ժամ կը նվիրեր Աստղկան պաշտաման», «համալսարանին շուրջը վառող աստղունք», «նետվեցավ ասպարեզը»: Իսկ եթե վիպասանը երգչուհու շրջագոստի մասին ասում է, թե «իր մարմինը ընդգրկելով աճուր բոլոր հրապույրը երևան կը հաներ», ապա սա Տեմիրճիպաշյանին այնպիսի մեղանշում է թվացել, որ պարզապես չնչել է: Այս կերպ էլ անհեղինակի կիսամերկ աղբիկ, սիրածը, ամեն կնոջ, կանանց, հասարակաց աղօթիկ բառերը համապատասխանորեն դարձվել են՝ քերասփող էակ, բարեկամունիք. Նվաշի բոլոր զտերց, իգական սեռին, հասարակականին և այլն:

Խմբագրումների երկրորդ խումբը լեզվական բնույթի է: Տեմիրճիպաշյանը առհասարակ հակում ուներ գրաբար բառաձևերի, քիչ գործածական, անգամ բրածո բառերի հանդեպ և իր նախասիրությունները ևս պարտադրել է վիպասանին: Զոհրապը, դիցուք, նախընտրել է դերանվանական իր հոլովաձևվել, կտանձնեմք բայաձևը, երիզ բառը. իսկ խմբագիրը դրանք փոխարինել է յուր, կտանձնեմք, շերիտ գուգահեռ ձևերով: Հեղինակը վեպը բաժանել է մասերի, իսկ «Երկրագունտում» դրանք ավելորդ են նկատված, մասնավորաբար հանված է «Մասն Ա. Սեղրաք» նշումը:

Հնարավոր է, որ գրողը հաշվի առած լինի Տեմիրճիպաշյանի ինչ-ինչ խմբագրումներ (ինքնագրի բացակայության պայմաններում ստուգապես որոշելն անհնար է), բայց սկզբունքորեն դրանք չի ընդունել: Դրա համար էլ նա ընդհանրապես հրաժարվել է «Երկրագունտի» ծառայություններից և այլևս չի աշխատակցել այդ հանդեսին, թեև Տեմիրճիպաշյանի հետ պահպանել է բարեկամական հարաբերություններ:

Հեռանալով «Երկրագունտից», Զոհրապը, սակայն, մտահոգված էր իր վեպի լույս ընծայմամբ, իսկ հնարավորությունները սուղ էին: Օրվա աղղեցիկ թերթը՝ «Արևելքը», տակավին չէր համարձակվում ազգային վեպեր տպագրել (դրա համար պետք է պահանջվեր ևս երեք տարի, մինչև որ թերթը խիզախեր հրատարակելու Տ. Կամսարականի «Վարժապետին աղջիկը»): Մնում էր միայն «Մասիսը»: Բայց Զոհրապը այս հեղինակավոր հանդեսին նույնպես չէր կարող դիմել, քանի որ գծոված էր նրա խմբագիր Արփիար Արփիարյանի հետ⁷: Զմտնելով մանրամասնությունների մեջ, ասենք, որ Արփիարյանը անհիշալար գտնվեց և առաջարկեց «Անհետացած սերունդը» տպագրել «Մասիսում»: Այս հրավերը Զոհրապի համար անապասելի էր. «Ո՞վ պիտի գուշակեր, — վերհիշել է գրողը 1902-ին, — որ օրին մեկը շաբաթաթերթ Մասիսին մեջ պիտի հրատարակվեր իմ առաջին վեպս: 1886-ին մոտերքն էր, երբ որ Արևելքի խմբագրական մարմինը, որ Մասիս շաբաթաթերթին ալ խմբագրությունը կը վարեր, կարդաց «Անհետացած սերունդ մը» ին մեկ երկու գլուխները ու հավնեցավ անոր. հիմա միայն կըմբռնեմ, որ զիս բաջայերելու կամքն զատ ոչինչ կրնար իմ հեք վեպս հյուրընկալել Մասիսին մեջ»⁸: Որ իսկապես Զոհրապի վեպի հրատարակության նախաձեռնողը Արփիարյանն էր, հաստատել է վերջինս (հենց այդ վկայությունն է հիշատակել Ալպոյաճյանը) իր հոդվածներից մեկում: Այստեղ կարողում ենք. «Երկրագունտը» քիչ մը բաց գտած էր Աճեհետացած սերունդը, և նորածիլ հեղինակը ապշեցավ, երբ մենք առանց խրատ-չելու առաջարկեցինք իրեն անփոփոխ հրատարակել իր վեպը: Այդ օրն Զոհ-

⁷ Արփիարյան-Զոհրապ փոխհարաբերությունների հարցը առանձին բնույթի է, որի արծարծումը ներկա հոդվածում նպատակահարմար չէ:

⁸ Գրիգոր Զոհրապ. Երկերի ժողովածու երկու հատորով. հ. II, Երևան, 1962, էջ 255:

լուսավորչական Մասիսի հետ և իր առաջին սիրուն-գրական-համատարիմ մնաց միշտ, մինչև որ ստանձնեց Մասիսի խմբագրությունը»⁹։

Ոչ մի տարակույս, որ Զոհրապի վեպը «Մասիսում» հրատարակվել է անխաթար տեսքով։ Ինչ վերաբերում է ստեղծագործության առանձին հրատարակությանը, որ լույս տեսավ 1887-ի հուլիսի առաջին կեսերին, ապա այն արտատպություն է «Մասիսից» և նույնությամբ վերարտադրում է վերջինիս բնագիրը։

Կ. Պոլսի «Հայրենիք» լրագիրը, հիմնադրումից հինգ օր անց՝ 1891-ի հուլիսի 18-ին, ծանուցեց, որ ձեռնարկել է Զոհրապի «Նարդիկ» վեպի տպագրությունը, ավելացնելով. «Հարկ կա այս անունը տալիս հետո ըսել, թե աղագիրն վնասը որքան հրապուրիչ պիտի ըլլա»։ Եվ իրոք, հուլիսի 20-ից թերթի էջերում, գրեթե յուրաքանչյուր համարում, սկսեց հրատարակվել «Նարդիկը»։ Բայց ահա օգոստոսի 14-ին, 19-րդ թերթում հրատարակելուց հետո, վեպի առաջագրությունն ընդհատվեց և այլևս ոչ այս, ոչ էլ որևէ ուրիշ պարբերականում չշարունակվեց։ Այդպես էլ «Նարդիկը» մնաց անավարտ։ Այս փաստը բանասիրության մեջ նույնպես արձանագրված է՝ առանց մեկնաբանման փորձերի։

Միանգամից ասենք, որ այս առթիվ ոչ հեղինակը, ոչ էլ ժամանակակիցներից որևէ մեկը բացատրություններ չեն տվել, ժամանակի մամուլում ևս ոչ մի ուղղակի հիշատակություն չկա։ Սակայն առկա են մի շարք անուղղակի տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս կռահումներ անել։

«Նարդիկի» տպագրությանը նախորդել է մի իրողություն, որ գրողի կենսագրության կարևոր դրվագներից է և աղբյուրվում է մեզ հետաքրքրող խրոնիկան։ Զոհրապը կարողացել էր այնքան մեծ համարում ձեռք բերել, որ Գուգլ-կուսնճուգ-Իճատի և Գանտիլի միացյալ թաղերը նրան առաջադրել էին ազգային ժողովի Լեւսփոխանության թեկնածու։ Իրավ է, ընտրությունների առաջին փուլում (հունիսի 9) չհաջողվեց շահել ձայների մեծամասնությունը, բայց արդեն երկրորդ փուլում (հունիսի 16) արդյունքը փայլուն էր. 45 քվեարկողից Զոհրապի օգտին ձայն տվեցին 34-ը, և նա ընտրվեց երեսփոխան։ Բայց հաղթանակ տոնելը վաղաժամ էր։ Ազգային ժողովը նախ հունիսի 28-ին հետաձգեց վավերացումը, իսկ հուլիսի 26-ին բեկանեց ընտրությունը՝ գտնելով, որ «Զոհրապ Գրիգոր էֆենտին ընտրված պահում օրինական տարիք ունեւած ըլլալուն (Աղդային սահմանադրությամբ պահանջվում էր, որ երեսփոխան կարող լին դառնալ 30-ը բոլորած անձինք, իսկ քվեարկության ժամանակ Զոհրապին պակասում էր... ութ օր—Ա. Շ.) յուր ընտրությունն ըստ Սահմանադրության չէ կրցած հաստատվիլ»։ Ականավոր մանկավարժներ Հակոբ Գուրգենը, Ռեթևոս Պերպերյանը և այլ երեսփոխաններ զուր էին բողոքում, փաստարկում, թե՛ ուրիշները, օրինակ՝ Մինաս Չերաղը, ընտրվել են 29 տարեկան հասակում։ Ընդհանուր ժողովի ատենապետ Հովհաննես Նուրյանը, որի մասին Զոհրապը հետագայում պետք է ասեր, թե նրա «պաշտած միակ աստվածը» բռնապետությունն է¹⁰, անդրդվել էր նա պնդում էր, թե չի կարելի «օրենքին շեղիլ» և Զոհրապի ընտրությունը ճանաչվեց ապօրինի¹¹։

Պահպանողական ուժերը չբավարարվեցին այսքանով։ Նրանք գործում էին լայն ճակատով և ջանում էին Զոհրապին հեռացնել նորաստեղծ «Հայրենիքից», որի գլխավոր աշխատակիցներից էր։ Բնորոշ է, որ ազգային ժողովի տխրահռչակ նիստի հաջորդ օրը՝ հուլիսի 26-ին, «Հայրենիքը» զետեղեց Հովհաննես Շահնազարի «Տարակույս» առաջնորդողը։ Թերթի տնօրենը հայտնում էր, որ իր դեմ թշնամություն է ստեղծվել, և մի քանի ազդեցիկ ազգայիններ պահանջել են հեռացնել Արփիարյանին, հրաժարվել Զոհրապի աշխատակցությունից։ «Գալով Զոհրապին,—գրում էր Շահնազարը,—բառարանին մեջ չկա անախորժ ածական մը, զոր իրեն դեմ գործածելիս պահիկ մը չընկրկին։ Վեր-

⁹ «Հայրենիք», Կ. Պոլիս, 1893, № 354։

¹⁰ Գրիգոր Զոհրապ. Երկերի ժողովածու. հ. I, էջ 465 և հտ.։

¹¹ Տե՛ս «Ատենադրությունը Ազգային ժողովոյ, բացում 1891 ամի», Կ. Պոլիս, էջ 92—94։

չապես ի՞նչ են այս 30 տարեկան երիտասարդին մեղքերն: Առայժմ տարիքին գոնե ամեն առավելություններն ունի. ջերմ է, աշխույժ է, թերևս չափազանց քաջ ու պրպտող, բայց գեթ համարձակ է»¹²:

Իսկ Զոհրապի «մեղքերը» շա՛տ-շա՛տ էին: Նա զինվորագրվել էր ութ-սունականների «հզոր խմբակին», հասցրել էր հեղինակություն վաստակել թե՛ որպես իրավաբան ու Միացյալ ընկերությունների առաջատար գործիչ, թե՛ որպես հրապարակագիր ու գրող՝ ծառանալով պատրիարքարանի. մեծատունների ու զանազան ազգային «երևելիների» դեմ: Եթե առաջավոր մտավորականները Զոհրապի մեջ տեսնում էին «խիզախ և անվեհեր» գրողի, «համարձակախոս, ուղղախոս, հանդուգն ու աներկյուղ» մարդու, որ գիտեր «մարտնչիլ ու մաքառիլ անիրավությանց բազմին դեմ»¹³, ապա պատրիարքարանի ներկայացուցիչների և այլուայլ նուրյանների համար նա վտանգավոր անձնավորություն էր: Նրանք, անշուշտ, չէին մոռացել Զոհրապի «Ներսես» նորավեպը (1888), որ Ա. Արփիարյանի բնութագրմամբ «Ազգային հիվանդանոցին վարչության դեմ ճակատամարտներու առաջին հրացանաձգություններն է» և «ազգին հոգին խռովեց»¹⁴: Նրանց հիշողության մեջ թարմ էին «Այրիքն» (1888) և «Մեղա՛ տեր» (1890) նորավեպերը, որոնցում գրողը մատնացույց էր արել պանդխտության բարոյական ավերածությունները և մերկացրել ազգի հարուստներին: Կամ հնարավոր էր չհիշել «Դարավերջիկ դաստիարակություն» հոդվածը, որ Ռեթեոս Պերպերյանը համարել էր «զայրույթի աղաղակ» և որտեղ հրապարակագիրը հանդես էր եկել «կարծեցյալ բարերարաց առատածեռության դեմ, զոր մուրացկանի մի ողորմություն տալու պես դարավերջիկ հոխորտանք կը նետեն ազգին երեսին և որո փոխարեն խնկարկություններ կակնկալեն»¹⁵: Կարո՞ղ էին հանդուրժել «Հայրենիքում» տպագրած «Դատեա Տէր դայնասիկ» (հուլիսի 18) ելույթը, որով կասկածի տակ էր առել դատաստանական խորհրդի անդամների իրավասությունը օրենքների գործադրության ու իրավական ուրիշ հարցերում և պահանջել էր դատավարող կողմերին «փոխանորդ դնել»: Այս հոդվածն էր, որ իրարանցում առաջ բերեց հանրային շրջաններում: Հուլիսի 24-ին Զոհրապը հանդես եկավ «Դազաղին շուրջ» պատասխանում, որտեղ նշելով, թե դատաստանական խորհուրդների մասին իր ելույթը «ընդհանուր համակրանք ողջունվեցավ», արձանագրում էր նաև, որ այն «դառնահամ» է համարվել մի ուրիշ միջավայրում: Հրապարակագիրը դարձյալ շարունակում էր ընդգծել բոլոր, այդ թվում ամուսնական դատավարությունների ժամանակ «փաստաբանին ներկայությունը ամենն մեծ պատվարն է այն զեղծումներուն դեմ, զոր ամեն քոնթոլիս ազատ դատարան մը կարող է անկախ ի գործ դնել»: Հոդվածին կցված ծանոթության մեջ «Հայրենիքը» լիովին պաշտպանում էր Զոհրապի տեսակետները՝ զրանցում տեսնելով «զորավոր հերքում մը անոնց փափագներուն, որը կրդձան սլահել մեր Դատաստանական խորհուրդն իր նախադատական վիճակին մեջ»:

«Նարդիկը» ևս պետք է դիտել հիշատակված երևույթների շղթայում: Այդ վեպը նույնպես խոստանում էր «դառնահամ» լինել որոշակի շրջանների համար: Զե՞ որ գրողն այստեղ չէր քողարկում իր ակնհայտ հակակրանքը ամեն մեծատունների և առաջին հերթին «ճշմարիտ պոլսեցի վաճառական» Մարտիրոս Տևվեճյանի նկատմամբ, ու «ունենալու գործողություններով» «ամոթալի անցյալ» և «կը հարստանար գողնալով»: Պատրիարքարանը և «մենծ աղաները» լավ էին հասկանում, որ Արփիարյանին, Զոհրապին և «Հայրենիքի» խմբին՝ լուրջնեւու ամենատրամադան միջոցը ծառայում էր կտրելն էր: «Հայրենիքին հիմնարկությունը 1891-ի հուլիսին, — հաստատում է Ար-

¹² «Հայրենիք», 1891, № 13:

¹³ Տե՛ս «Արևելք», օրաթերթ, Կ. Պոլիս, 1888, № 1500 և 1889, № 1583:

¹⁴ Արփիար Արփիարյան. Երկեր. Երևան, 1987, էջ 457—458:

¹⁵ «Արևելք», 1890, № 2072:

փիլարյանը,—խոռվեց մեր պատրիարքական ու կես պատրիարքական մարմինները և անոնց հետևորդները: Աշըգյան պատրիարք սկսավ Հայրենիքի դեմ Դուռը թաքրիրներ գրելով ամենամեծ դժվարություններ հարուցանել մեր առջև: Պատրիարքարանն տրված օրինակին հետևելով հիվանդանոցի խնամակալներ, թաղական խորհուրդներ, վարժարաններու հոգաբարձուներ Դուռը կը վազեին, ոստիկանության կը դիմեին կառավարության խստությունները հրավիրելու համար քննադատող թերթին դեմ»¹⁶: Այդ փորձերը հաջողությամբ պսակվեցին: 28 համար լույս ընծայելուց հետո, երբ տպագրվել էր «Նարդիկի» 19-րդ թերթը, օգոստոսի 14-ից կառավարությունը թերթը «անպայման ժամանակով» դադարեցրեց: Թեև սեպտեմբերի 7-ից «Հայրենիքը» նորից սկսեց հրատարակվել (դեկտեմբերին դարձյալ դատապարտվեց մեկամսյա խափանման), սակայն Զոհրապը ոչ միայն շարունակեց իր վեպի տպագրությունը, այլև առհասարակ մինչև 1892-ի հունվարի 9-ը այս պարբերականում ոչինչ չհրատարակեց:

Սա էր նշանակում, թե «Հայրենիքը» ենթարկվեց ճնշման և հրաժարվեց Զոհրապի աշխատակցությունից: Պարզապես գրողն այս ամիսներին զբաղված էր «Մասիս» հանդեսի լույս ընծայման արտոնություն ձեռք բերելով և փաստաբանական ու հանրային գործերով: Աշնանը նրա թեկնածությունը նորից առաջադրվեց վերևում հիշված թաղերի երեսփոխան ընտրվելու համար: «Հայրենիքը» հիշեցնելով ազգային ժողովի ամառային նիստի պատմությունը, «Ընտրություն մը» խմբագրականում գրում էր. «Ընտրության բեկանումը կը փափագվեր ոչ թե անոր համար, որ 30 տարին լրացնելու մեկ երկու օր պետք է եղեր ընտրության օրն, այլ անոր համար, որ ընտրվողն Գրիգոր Զոհրապ կը կոչվեր, հետևաբար «անոնցմե» չէր»: Թերթը կոչ էր անում քվեարկել Զոհրապի օգտին, քանի որ «երեսփոխանական ժողովին մեջ նա պիտի կրնա ոչ միայն խոսիլ ու պաշտպանել կամ ընդդիմաբանել, այլև պիտի կրնա սանձել զանոնք ալ, որք խորհելու և խոսելու հարկավորությունը կը համարին երեսփոխանական պարտավորությանց անհաշտ թշնամին»: «Հայրենիքը» նախազգուշացնում էր նաև, որ «շատ մը մեքենայություններ պիտի ըլլան Զոհրապի ընտրության դեմ, վասնզի այդ երիտասարդը սարսափ կազդե մեր պատրիարքական, պաշտոնական շրջանակներու և միշտ ամեն ջանք գործ կը դրվի զնա հեռու պահել ազգային գործոց շրջանակեն»¹⁷: Այդ տագնապններն արդարացան. պաշտոնական մարմինները հասան նրան, որ նախ Գանտիլիի ընտրողական ժողովը Զոհրապի անունը հանեց ընտրողական ցանկից, այն պատրվակով, թե նա ընկավում է ուրիշ թաղում, իսկ Գուգլունճուգ-Խճատիե թաղերի ժողովում, նոյեմբերի 10-ին, Զոհրապի օգտին տրվեց ընդամենը 5 քվե (33-ից), որ ամենացածր արդյունքն էր¹⁸:

Կարելի է հարց տալ, ինչու՞ Զոհրապը հետագայում չտպագրեց «Նարդիկի», մանավանդ որ դրա հնարավորություններն ունեւր. (1892-ի հունվարից մինչև 1893-ի օգոստոսը «Մասիս» հանդեսի խմբագիրն էր): Ամենայն հավանականությամբ «Հայրենիքի» խափանման շրջանում նա համոզվել է, որ վեպը «իր ժանրը չէ և չի շարունակել «Նարդիկի»: Իհարկե, վաղ թե ուշ գրողը հանգելու էր նման հետևության, բայց ոչ մի տարակույս, որ եթե չդադարեցվեր թերթը, ապա նա դեռևս կշարունակեր վեպի հրատարակությունը, այլապես վերջին թերթնում խմբագրությունը չէր նշի՝ «շարունակելի»: Այսպես թե այնպես, «Հայրենիքի» դադարումը օբյեկտիվորեն պատճառ դարձավ, որ վեպը ընդհատվեր ավելի շուտ, քան այդ կորոշեր հեղինակը:

Իր առաջին նովելը՝ «Վարդապետին մականունը», Զոհրապը հրատարակել է 1887-ի դեկտեմբերին: Մտեղծագործական կյանքի հետագա տարիներին գրողը Կ. Պոլսի մամուլում տպագրել է ևս մի քանի տասնյակ նորավեպ, որոնք միշտ էլ չբովանդակվեցին ընդունվել ընթերցողների կողմից, արժանացել քննա-

¹⁶ «Նոր կյանք», հանդես, 1900, № 21, էջ 327:

¹⁷ «Հայրենիք», 1891, № 61:

¹⁸ Տե՛ս «Ատենադրությունը... 1891 ամիս», էջ 19—20:

նադատության գնահատանքին, երբեմն էլ թարգմանվել ֆրանսերեն կամ արտատպվել ժամանակի արևելահայ այս ու այն պարբերականում: Բայց, որքան էլ տարօրինակ լինի, հայ նորավեպի այս ամենամեծ վարպետը իր նովելների անդրանիկ գրքույկը լույս ընծայեց միայն 1909-ին, որին 1911-ին հաջորդեցին ևս երկուսը: Մի՞թե հեղինակը մինչ այդ երբևէ չի ցանկացել առանձին գրքով ներկայանալ ընթերցողներին:

Փաստերը խոսում են այն մասին, որ Զոհրապը այդպիսի փորձեր արել է, բայց դրանք, իրենից անկախ պատճառներով, ապարդյուն են անցել:

Հիշատակենք այդ փաստերը:

1902-ի վերջերին «Արևելյան մամուլի» Կ. Պոլսի թղթակիցը հաղորդեց, որ «պիտի ունենաք Զոհրապի նորավեպերը», որ դրանց «մեկ մասն Մատթեոսյան ապարանեն պիտի հրատարակվի մոտերս»¹⁹: Այդ լուրը հաստատեց մայրաքաղաքի մի ուրիշ պարբերական. «Մոտ ատենեն Մատթեոսյան տպարանեն կը հրատարակվի Գր. Զոհրապի տասը տարվան շրջանի մը մեջ հրատարակված նորավեպերու մեկ հավաքածուն: Ավելորդ է ըսել, թե այդ հրատարակությունը օրվան գիրքը պիտի ըլլա՝ մոռցնել տալով այն տաղտուկը, լուր գրական հրապարակը կուտա մեղ ատենն մը ի վեր իր միօրինակությամբը և աննշան արտադրումներովը»²⁰: Տարագրության մեջ գտնվող Ա. Արփիարյանը իր հերթին շտապեց Պետերբուրգի «Բանբերին» ծանուցել. «Մասիսի» ու «Հայրենիքի» մեջ իր ցիրուցան գործերը հավանորեն մոտերս հատորով մը երևան կուգան և հեղինակի տաղանդին վրա հստակ գաղափար մը կուտան»²¹: Բայց շատ լանցած քննադատ Հովհաննես Գաղանձյանը «Թրքահայ դրականությունը 1904-ին» տարեկան տեսության մեջ ցավով արձանագրեց. «...իր նորավեպերը հատորի մը մեջ ամփոփելու ձեռնարկը, որ ծանուցվեցավ, դժբախտաբար ցարդ իրականություն չգտավ՝ մեզ թողելով հուսահատ սպասման մեջ»²²:

Ինչո՞ւ լույս չտեսավ ծրագրված ժողովածուն:

Առհասարակ այդ տարիներին Թուրքիայում գիրք գրելն ու հրապարակելը դյուրին չէր: Ամեն մի գրող, ժամանակի թուրք մտավորականներից մեկի արտահայտությամբ, «մերժված, արհամարհված էակ» էր, իսկ գիրքը տպագրել տալը՝ «ամենից տաժանելի գործը» (ձեռագիրը գրաքննությանը պետք է ներկայացվեր երեք օրինակից և պետք է բավարարեր ամենաարտոոց պահանջներին): Սակայն միայն սրանցով բացատրել Զոհրապի ժողովածուի չհրատարակվելը՝ կլինեն թերի: Բանն այն էր, որ Զոհրապի նկատմամբ կիրառվում էին առանձնահատուկ խստություններ. իշխանությունների աչքում նա անվստահելի էր: Թեև Զոհրապը վայելում էր Կ. Պոլսի առաջին փաստաբանի» վաստակած համբավ, բայց Բ. Դուան ցուցումով դատական նախարարությունը նրան զրկել էր փաստաբանական գործունեություն ծավալելու իրավունքից: «Իմ 25 տարվան փաստաբանի կյանքս, — 1909-ին վերհիշել է Զոհրապը, — համակ քաղաքական ամբաստանյալներու նվիրված Պոլսո բոլոր պատժական եղեմական տարեգրություններով հաստատված է և վերջիվերջո զիս մինչև աքսոր առաջնորդելու պատճառ պիտի ըլլար, եթե ուս դեսպանատունը զիս իր avocat conseil-ը անվանիւր արգելք եղած չըլլար...»²³: Հիշեցնենք, որ Կ. Պոլսի ուսական դեսպանատան «օգնական-թարգման» դառնալը (1902, դեկտեմբեր) համընկավ Զոհրապի՝ նովելների ժողովածու հրատարակելու մտադրությանը: Եթե այս պաշտոնը մի կողմից գրողին ապահովեց աշխատանքով, նպաստեց, որ նրան չաքսորեն Չանղըրը (ուր ուզում էին ուղարկել կառավարչի օգնական նշանակելու պատրվակով), ապա մյուս կողմից առիթ դարձավ, որ Զոհրապի անունը մտցվի «սև ցուցակում» և ճանաչվի թուրքական

19 «Արևելյան մամուլ», Իզմիր, 1903, № 1, էջ 12:

20 «Մաղիկ», հանդես, Կ. Պոլիս, 1903, № 2, էջ 19:

21 Ա Ր Փ Ի Բ Ա Ր Փ Ի Բ Ր Յ Ա Ն. Երկեր, էջ 456:

22 «Մաղիկ», 1905, № 10, էջ 478:

23 Արևմտահայ գրողների նամականի. պրակ 1, Երևան, 1972, էջ 45:

պետության «թշնամի» ու «լրտես»։ Գրաքննությունը ուշիուշով հետևում էր Զոհրապի ամեն մի քայլին, գրական յուրաքանչյուր ելույթը հսկողության տակ էր։ Բնորոշ է, որ այդպես էլ նրան չհաջողվեց իրականացնել «Կյանքի դրվագներ» նովելաշարը, որի հրատարակության իրավունքը խոստացել էր «Մասիս» հանդեսին²⁴ (1904-ի հունվարին այդ ընդհանուր խորագրի տակ տպագրել էր միայն «Հակոբիկ» նորավեպը)։ Իսկ այն բանից հետո, երբ 1905-ի հուլիսի 8/21-ին մահափորձ կատարվեց սուլթան Աբդուլ-Համիդի դեմ, դավադրության մեղադրանքով կալանավորվեց Զոհրապի դռնապանը և մի քանի օրով ձերբակալվեց նաև գրողը, նա այլևս դարձավ արգելված հեղինակ։ Ամբողջ շրջապատի, մինչև 1908-ի գարունը, երբ հաջողվեց արտասահմանում մշտական բնակության թույլտվություն վերցնել, նա ոչ միայն մամուլում ոչինչ չկարողացավ հրատարակել, այլև գրողի անունը, մեկ-երկու բացառությամբ, արտաքսվեց պարբերականների էջերից։

Եվ այդուհանդերձ, այդպիսի պայմաններում անգամ Զոհրապը չհրաժարվեց նովելների նոր ժողովածու հրատարակելու մտքից։ Որոշ տեղեկությունների համաձայն, Եվրոպա մեկնելուց առաջ նա դիմել է Եգիպտոսում հաստատված Ա. Արփիարյանին՝ իր գիրքը արտասահմանում հրատարակելու առաջարկով։ Վերջինս սիրով ընդառաջել է, կոնկրետ քայլերի դիմել, բայց Արփիարյանի սպանությունը և Թուրքիայում կատարված վերահաս դեպքերը խանգարեցին, և առաջվա պես Զոհրապի նորավեպերը մնացին մամուլի էջերում սփռված։

Իր վաղեմի երազանքը Զոհրապը իրագործեց միայն օսմանյան սահմանադրության հռչակումից հետո։ Ազգային երեսփոխանությունը, օսմանյան պառլամենտին անդամակցելը, թուրքական իրավաբանական համալսարանում դասավանդելը, փաստաբանական գործունեությունը, ամենօրյա նիստերն ու խորհրդակցությունները, ժողովներն ու գումարումները, պաշտոնական ընդունելություններն ու այցելությունները գրական զբաղումների ժամանակ չէին թողնում։ Ահա ինչու նա իր նովելների հրատարակության գործը հանձնարարեց մտերիմներից մեկին՝ խմբագիր ու հրապարակախոս Արամ Անտոնյանին, որը 1908-ի առաջին կեսին հանդգնել էր ասպարեզ տալ Զոհրապ-գրողին։ Անկասկած, ստեղծագործությունների ընտրությունը, խմբագրումը, ժողովածուների խորագրումը կատարել է ինքը՝ հեղինակը, բայց բնագրերի պատրաստումը և տպագրության հետևելը վստահել է Անտոնյանին։ Զոհրապը ժամանակ չի ունեցել նաև իր գրքերին կցել որևէ առաջաբան կամ բացատրություն, բայց բանասիրական քննությամբ հնարավոր է պարզել այն հիմնական սկզբունքները, որոնցով առաջնորդվել է «Խղճմտանքի ձայներ», «Կյանքը ինչպես որ է» և «Լուռ ցավեր» ժողովածուները կազմելիս։ Մեր կարծիքով դրանք հանգում են հետևյալին.

1. Զոհրապը նպատակ չի ունեցել ընթերցողներին ներկայացնել մամուլում տպագրած իր բոլոր նովելները, այլ կատարել է չափազանց պահանջկոտ ընտրություն։ Մինչև 1911-ը նա հրատարակել էր 41 նորավեպ, որոնցից զերեքերում ամփոփեց միայն 34-ը։ Ընդ որում ժողովածուներից դուրս է թողել այնպիսի գործեր («Վարդապետին մականունը», Կանանց բժիշկը, «Փոթորիկը»), որոնք ժամանակին բարձր են գնահատվել (օրինակ, վերջին նորավեպի մասին Ա. Արփիարյանն ասել է, թե «եվրոպական մատենագրության մեջ իսկ պզտիկ գլուխգործոց մը պիտի կրնար սեպվիլ»²⁵)։ Եվ ընդհակառակն, զետեղել է ստեղծագործություններ, որոնց մասին քննադատությունը խիստ էր արտահայտվել («Մարապետը» և «Փոթորիկը» նորավեպերը զմյուռնահայ գրագետ ու փաստաբան Կարապետ Ստեփանյանը համարել է «կոշտ ու բիրտ»,

²⁴ Տե՛ս «Մասիս», հանդես, 4. Պոլիս, 1904, № 2, էջ 19.

²⁵ Արփիարյան Արփիարյան. Երկեր, էջ 450.

«անընական», ինչը ժամանակին առաջ է բերել քննադատների զայրույթը և առիթ տվել վիճարանությունների)²⁶:

2. Նովելները դասավորել է ոչ թե ժամանակագրական սկզբունքով, այլ ըստ «ներքին բովանդակության», հետևաբանաբար, որ ստիպում է մերժել Զոհրապի ստեղծագործությունը կամայականորեն տարրեր շրջանների բաժանելու տարածված միտումը:

3. Պարբերականներում տպագրված Զոհրապի նովելները մշտապես ունեին «նորավեպ» նշումը: Ժողովածուներում ժանրային նման տարբերակումը համարվել է ավելորդ: Մի քանի նովելներ ունեցել են ենթավերնագրեր՝ «Ֆուրթունա» — «Նավավարի մի պատմություն», «Ճոկոն» — «Միամիտի պատմություն», «Դիմակը» — «Բարեկենդանի պատմություն», «Տալիլա» — «Բժշկի մի պատմություն», «Ջաբուղոն» — «Գողի մի պատմություն» և «Սրջանիկ մահը» — «Բժշկի մի հիշատակարանն»: Այս ենթախորագրերը գուրս են թողնված անշուշտ այն արգարացի մտահոգության, որ հաճախ դրանք նեղացնում էին ստեղծագործության թեմատիկ ընդգրկումը և կարող էին զրականագիտական թյուր մեկնությունների տեգի տալ:

4. Նովելները մամուլից արաաապված են առանց էական խմբագրումների: Կատարված են միայն ոճական մասնակի շտկումներ ու սրբագրումներ: Դիտելի է, որ զրարար Դոլովաձեները փոխարինված են աշխարհարարով (մարմնոյ-մարմնի, հագված-հագած), վերացված են մեր հոգի անհարկի կիրառությունները, միացված անջատ գրվող չլ մասնիկը (չի խոսվելու-չխոսվելու, չի փճացուց-չփճացուց): Հետաքրքիր է, որ հիշյալ Կ. Ստեփանյանի ցույց տված հայերենի «հոշոտման» նմուշներից և ոչ մեկում Զոհրապը մի ստորակետ անգամ չի փոխել:

Մամուլում եղած վկայությունները ցույց են տալիս, որ «սեղմտանքի ձայները» լույս է ահսել Աղանալի կոտորածներից անմիջապես հետո՝ 1909-ի ապրիլի վերջերին (Զոհրապը ժողովածուի վաճառքից գոյացած գումարը նվիրել է աղետյալներին), «Կյանքը ինչպես որ է» ժողովածուն՝ 1911-ի հունվարին, իսկ «Լուս ցավերը»՝ վերջինիցս մի քանի ամիս հետո:

ИЗ ИСТОРИИ ИЗДАНИЯ СОЧИНЕНИИ ГРИГОРА ЗОХРАБА

А. С. ШАРУРЯН

Резюме

В статье исследуются историко-литературные и общественно-политические факторы, связанные с изданием произведений выдающегося армянского писателя Григора Зохраба (1861—1915). Показано, что роман «Исчезнувшее поколение», который начал печататься в 1885 году, был затем приостановлен по воле автора, поскольку роман был воспринят как натуралистический и в его тексте были сделаны редакторские правки Е. Темирчиашяна, с которыми писатель не был согласен. Публикация романа «Нардик» (1891) осталась незавершенной. На основе новых фактов доказано, что Г. Зограб пытался издать сборник своих новелл, однако правительство султанской Турции и цензура помешали этому. В статье освещены также творческие и текстологические принципы составления трех сборников новелл Зограба — «Голоса совести» (1909), «Жизнь как она есть» (1911) и «Тихие боли» (1911).

²⁶ Տե՛ս «Արևելյան մամուլ», 1900, № 11, էջ 448—450, № 12, էջ 494—495, № 13, էջ 515—519, № 14, էջ 572—573: «Մատիս», 1900, № 24, էջ 369—370 և այլն: